

Նախագիծ

Արձանագրային

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրա-
պետության կառավարության եզրակացության նախագծի մասին

Հավանություն տալ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հա-
յաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրա-
պետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան եզրակացության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի
Հանրապետության Ազգային ժողով:

Տ. Դավթյան

Ամսյա Ենգոյան ----- « » նոյեմբերի 2009 թ.

Կարեն Մարգարյան----- « » նոյեմբերի 2009 թ.

Արթուր Մարգարյան ----- « » նոյեմբերի 2009 թ.

01/10.1/343-10

2009-10-21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Վարդան Բոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքորեն կիսում է նախագծի հեղինակների մտահոգությունը և գտնում է, որ կա խնդիր, որը քննարկման կարիք ունի: Սակայն նախագծի ընդունումն իր հերթին կառաջացնի որոշակի խնդիրներ, որոնք քննարկման կարիք ունեն:

Մասնավորապես, նախագծի ընդունման դեպքում տարբեր տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կատեղծվեն անհավասար պայմաններ, քանի որ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանք ներմուծողը և արտադրողը կարող են լինել տարբեր տնտեսավարող սուբյեկտներ: Արդյունքում կստացվի, որ եթե շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքը ներմուծվել է անմիջապես արտադրողի կողմից, ապա նա հնարավորություն կունենա արտադրված և իրացված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարից նվազեցնել օգտագործված ապրանքի ծավալներին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարը:

Իսկ եթե շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանք ներմուծողը և արտադրողը տարբեր տնտեսավարող սուբյեկտներ են, այսինքն՝ արտադրողն այդ ապրանքները ձեռք է բերում անմիջապես ներմուծողից, ապա ներմուծված ապրանքի բնապահպանական վճարը չի նվազեցվի, քանի որ արտադրողը նման ապրանքի ներմուծում չունի: Այս դեպքում արտադրողին նույնպես հաշվանցման հնարավորություն ընձեռելու նպատակահարմարության հարցը քննարկման կարիք ունի, որի լուծումները պետք է ներառվեն ներկայացված նախագծում:

Կարծում ենք, որ նախագիծը լրացուցիչ քննարկման կարիք ունի նաև այն տեսանկյունից, որ բնապահպանական վճարները բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով վճարվող պարտադիր վճարներ են, որոնց սահմանման հիմքում դրված է ոչ թե որևէ ապրանքատեսակի արտադրությունը խթանելու մոտեցումը, այլ այդ ապրանքատեսակների օգտագործմամբ (այդ թվում՝ պոտենցիալ) շրջակա միջավայրին պատճառվող վնասի ազդեցությունը:

Ներկայացված նախագիծը լրացուցիչ քննարկման կարիք ունի նաև ֆինանսական գնահատականների առումով, քանի որ նախագծի ընդունումը հանգեցնելու է պետական եկամուտների կորստի:

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք նախագծի հեղինակներին առայժմ ձեռնպահ մնալ նախագծի ընդունումից և համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ նշված խնդիրների լուծումները գտնելու և ըստ այդմ նախագիծը լրամշակելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

Տիգրան Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minister@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

№ _____

Ձեռ. № _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

պրն. Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի ս.թ. նոյեմբերի 16-ի թիվ 02/10.1/8135-09 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ համատեղ քննարկել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի եւ Վարդան Բոստանջյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ “Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը եւ հայտնում է հետեւյալը:

Վերոնշյալ նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարը պակասեցնել իրացման շրջանառության հաշվարկի մեջ ներառված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների օգտագործված ծավալներին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարի չափով:

Գտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը հիմնավոր չէ հետեւյալ նկատառումներով.

1) Կարծում ենք, որ նախագծի ընդունման դեպքում տարբեր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կատեղծվեն անհավասար պայմաններ, քանի որ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանք ներմուծողը եւ արտադրողը կարող են լինել տարբեր տնտեսվարող սուբյեկտներ: Արդյունքում կստացվի, որ եթե շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքը ներմուծվել է անմիջապես արտադրողի կողմից, ապա նա հնարավորություն կունենա արտադրված եւ իրացված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարից նվազեցնել օգտագործված ապրանքի ծավալներին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարը:

Իսկ եթե շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանք ներմուծողը եւ արտադրողը տարբեր տնտեսվարող սուբյեկտներ են, այսինքն՝ արտադրողը այդ ապրանքները ձեռք է բերում անմիջապես ներմուծողից, ապա ներմուծված ապրանքի բնապահպանական վճարը չի նվազեցվի, քանի որ արտադրողը նման ապրանքի ներմուծում չունի, իսկ, նման դեպքում, իր

կողմից չվճարված բնապահպանական վճարի գծով արտադրողին նվազեցում կատարելու հնարավորության ընձեռումը պրակտիկորեն դժվար է վարչարարական տեսանկյունից անվերահսկելի գործընթաց է:

2) Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորող տեղեկանքի համաձայն՝ նախագծի ներկայացումը նպատակ ունի խթանելու հատկապես նավթամթերքների, նավթաձյուղի, ասֆալտի արտադրությունը Հայաստանի Հանրապետությունում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ բնապահպանական վճարները բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով վճարվող պարտադիր վճարներ են, որոնց սահմանման հիմքում դրված է ոչ թե որեւէ ապրանքատեսակի արտադրությունը խթանելու մտտեցումը, այլ այդ ապրանքատեսակների օգտագործմամբ (այդ թվում՝ պոտենցիալ) շրջակա միջավայրին պատճառվող վնասի ազդեցությունը:

Այդ առումով էւս, կարծում ենք, որ ներկայացված նախագիծը հիմնավոր չէ:

Մասնավորապես, նախագծին կից ներկայացված տեղեկանքում նշված նավթաձյուղը մի դեպքում կարող է օգտագործվել շինարարության մեջ, մեկ այլ դեպքում ասֆալտի արտադրության մեջ: Շինարարության մեջ օգտագործվելու դեպքի համեմատությամբ, որտեղ բնապահպանական վճարը վճարվում է միայն նավթաձյուղը ներմուծելիս, կարծում ենք, հիմնավոր է ասֆալտի արտադրության դեպքում բացի նավթաձյուղի ներմուծման ժամանակ գանձվող բնապահպանական վճարից նաեւ ասֆալտի արտադրության էւ իրացման ժամանակ բնապահպանական վճարի գանձումը, քանի որ այս դեպքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կրկնակի է. առաջին դեպքում՝ նավթաձյուղից ասֆալտի արտադրության ժամանակ, երկրորդ դեպքում՝ ասֆալտի օգտագործման ժամանակ:

3) Նախագծին կցված չեն նաեւ առաջարկության ֆինանսական գնահատականները, քանի որ նախագծի ընդունումը հանգեցնելու է պետական եկամուտների կորստի, ինչն այլ հավասար պայմաններում կարող է սահմանափակել նաեւ համապատասխան բնապահպանական միջոցառումների իրականացումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



S. ԴԱՎԹՅԱՆ

Կատ. ՝ ընթ. քաղաք. եւ վերլուծ. բաժին
Հեռ. 595 338

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Երևան, Կառավարական տուն 1

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Տիգրան Դավթյանին (հավաք)

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Գևորգ Դանիելյանին

ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Ներսես Երիցյանին

ՀՀ բնապահպանության նախարար
պարոն Արամ Հարությունյանին

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ խնդրում եմ քննության առնել և
ներկայացնել եզրակացություն:

Ժամկետ՝ 5 օր:

Տիկին Ամալյա Ենգոյանին

AJV-01-27 2010-01-14

պարոն Կարեն Մարգարյանին
պարոն Արթուր Մարգարյանին

Խնդրում եմ ամփոփել եզրակացությունները
և պատրաստել պատասխանի նախագիծ:

Ժամկետ՝ 3 օր:

CoSign Digital Signature

Դավիթ Մարգարյան

02/10.1/8135-09 2009-11-16

.....-ը-ի, 20..... թ. h/h.....

Կատարող. Պետրոս Քացախյան
Հեռ. 515731



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Վարդան Բոստանջյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Շ. Արսենյան
Հ. ԱՐԱՀԱՄՅԱՆ

2009թ. նոյեմբերի 11
Ն - 1402


52

062-16865
13 11 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

11 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի և Վարդան Բոստանջյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը:


Հ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

11.11.2009թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75 և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 47 հոդվածներով օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են՝

ա) օրենքի ընդունման հիմնավորումը,

բ) օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը,

գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանք:

Խնդրում ենք նշված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Պատգամավորներ՝

Սեյրաբ Լ. Այվազյան (053)
Գր. Բաղդասարյան (085)

Մտից հ. 772-231
« 11 » 11 2009թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՔԾԻՆԱՏԱԿԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության (28 դեկտեմբերի 1998 թվականի ՀՕ-270) օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությունով.

«Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող` շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրությունում օգտագործվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ, որոնց ներմուծման համար սույն օրենքին համապատասխան վճարվել են բնապահպանական վճարներ, սույն մասի 2-րդ պարբերության համաձայն հաշվարկված բնապահպանական վճարի գումարը պակասեցվում է իրացման շրջանառության հաշվարկի մեջ ներառված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի օգտագործման ծավալին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարի չափով, բայց ոչ ավելի տվյալ ապրանքի ներմուծման համար նախապես վճարված բնապահպանական վճարի գումարից:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման**

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը եւ առկա խնդիրները

Ներկա իրավիճակը

«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ` օրենք) կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական եւ բնօգտագործման վճարների հասկացությունների, վճարողների շրջանակի, վճարների տեսակների, հաշվարկման եւ վճարման կարգի, օրենքի խախտման համար պատասխանատվության սահմանման եւ վճարների հետ կապված այլ հարաբերությունները:

Օրենքի կիրարկման ներկայիս փուլում առկա է որոշակի հիմնախնդիր, որը հրատապ լուծում է պահանջում:

Համաձայն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի Հայաստանի Հանրապետություն ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարվում է բնապահպանական վճար «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերին եւ դրանց մաքսային արժեքին համապատասխան:

Ներկայումս Հայաստանում վերոգրյալ ապրանքների որոշակի մասն օգտագործվում է արտադրության տարբեր ոլորտներում եւ դրանց արդյունքում արտադրվում եւ Հայաստանում իրացվում են ապրանքներ, որոնք ներառված են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ցանկում, եւ համաձայն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության (մեջբերում)՝

«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկում է արտադրողը՝ իրացման շրջանառության հիման վրա եւ վճարում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրանքին համամասնորեն:»:

Վերոգրյալի արդյունքում արտադրող ձեռնարկությունը շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի արտադրության մեջ օգտագործվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար սահմանված բնապահպանական վճարի մասով փաստացի կատարում է կրկնակի վճարում, որն արդարացի չի կարող գնահատվել: Առկա իրավիճակը չի խթանում վերոգրյալ ապրանքնատեսակների (հատկապես նավթամթերքների, մայթաձյուրի, ասֆալտի) արտադրությունը Հայաստանում:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Ներկայացվող նախագծով առաջարկվում է կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճարի հաշվարկման կարգն, այդ թվում՝ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնելով հետեւյալ խմբագրությամբ նոր պարբերությունով.

«Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրությունում օգտագործվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ, որոնց ներմուծման համար սույն օրենքին համապատասխան վճարվել են բնապահպանական վճարներ, սույն մասի 2-րդ պարբերության համաձայն հաշվարկված բնապահպանական վճարի գումարը պակասեցվում է իրացման շրջանառության հաշվարկի մեջ ներառված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի օգտագործման ծավալին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարի չափով, բայց ոչ ավելի տվյալ ապրանքի ներմուծման համար նախապես վճարված բնապահպանական վճարի գումարից:

2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Ներկայացված օրենքի նախագծով կկատարելագործվի Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար

բնապահպանական վճարի հաշվարկման կարգը՝ ավելի արդյունավետ դարձնելով այն իրավակիրարկման համար:

Հոդված 10. Բնապահպանական վճարի հաշվարկման և վճարման կարգը

1. Շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետելու համար վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայր արտանետված վնասակար նյութերի ծավալի հիման վրա և վճարվում է սույն օրենքին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված և շահագործվող ավտոմեքենաներից ու մեխանիզմներից վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարը հաշվարկվում և վճարվում է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա և պետական բյուջե է վճարվում ներմուծելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է արտադրողը՝ իրացման շրջանառության հիման վրա և վճարում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրանքին համամասնորեն:

«Այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրությունում օգտագործվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ, որոնց ներմուծման համար սույն օրենքին համապատասխան վճարվել են բնապահպանական վճարներ, սույն մասի 2-րդ պարբերության համաձայն հաշվարկված բնապահպանական վճարի գումարը պակասեցվում է իրացման շրջանառության հաշվարկի մեջ ներառված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքի օգտագործման ծավալին համապատասխանող չափաքանակի ներմուծման համար վճարված բնապահպանական վճարի գումարի չափով, բայց ոչ ավելի տվյալ ապրանքի ներմուծման համար նախապես վճարված բնապահպանական վճարի գումարից:

3. Արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար վճարը հաշվարկվում է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ էլնելով հաշվետու ժամանակաշրջանում հատուկ հատկացված

տեղերում տեղադրված արտադրության և սպառման թափոնների ծավալներից և
դրանց վտանգավորության դասից, ու վճարվում է սույն օրենքին համապատասխան:
(10-րդ հոդվածը խմբ. 05.12.00 ՀՕ-122, լրաց. 01.06.06 ՀՕ-98-Ն, խմբ. 20.12.06 ՀՕ-
246-Ն)